

ԳՎՈՒԽ ԻԹ:

Գրքածախնէրը, Գրի Գրքարաննէրը, Դարի Գրքարաննէրը. Կածէլէլանէրը ու ասոնց նման բանէրը:

1. Սոր գրքեր ծախսող քսանըւիրեր գրութեաճախներ կան, որ իրենց հաշվին շատ գրքեր տրպել կուտան, իրենց գրքերէն՝ ուրիշ քաղքըներուն գրքածախներուն կըխրկեն, ու անոնց գրքերէն ալ իրենց խանութները բերել կուտան, անոր համար ինչ նոր գիրք որ կուզենան՝ քովերնին կըգտնուի: Այսօր հատ հին գրքեր ծախսող գրքածախներ կան, որ գործածած գրքերը աճրգներէն (մէզատներէն) կըգնեն, ու խանութինն աժան գնով կըծախեն, նոր տպած ու չիգործածած գրքեր ծախել իրենց արգելած է: Աս տարի մեր Սիւթարեան միաբանութիւն ալ մասնաւոր կայսերական հրովարտակով արտունութիւն առաւ Աննայի մէջ զատ խանութ ունենալու, ու ինչ նոր գիրք որ ըլլայ, թէ իր տպարանը տպած, և թէ ուրիշ տեղ տպած, անխափան ծախելու:

2. Տպարաններուն մէջը կայսերական տպարանը առաջինն է, որուն մէջը բոլոր կայսերական հրովարտակները, կարգադրութիւնները, հրամանները, ամէն տարի մեծ պաշտօնատէրներու անուններուն ու ընակութիւններուն գրքերը՝ որ շէմլէկով կըսվին՝ կըտպվի. որուն մէջը խաղաղութե՛ն ատենը

քսան, պատերազմի ատենը երեսունէն աւելի մամուլ (տպելու մէնկէնէ) կրբանի: Ուրիշ տպարանները քսանը հինկ հատ են, որոնց մէջը երկուքէն ինչվան տասը մամուլ բանեցընող կայ, ու ամէնուն մէջը մէկ տեղ հարիւր երեսուն մամուլ կրբանի: Մեր տպարանը ասոնց մէջը մեծութեան դիէն միջակն է, ու եօթը մամուլ կրբանի, ու մէջը 16էն ինչւան 22 բանուոր կրբանի, բայց Ա իննտյի մէջ հիմայ աղէկ անուն հանեց, ինչու որ հիմայ ուրիշներու համար լատիներէն, իտալերէն, գերմաներէն, ֆրանսըզերէն, մաճառերեն, մոսկոֆերէն, սերվիաներէն, վալախերէն, հոռմերէն ու ուրիշ լեզուներով շատ գրքեր կը տպվին կոր: Ուրիշ տպարանները ամէն լեզուներով տպելու հրաման չունին, մանաւանդ մէկ քանի լեզուներ կան, որ ամէն մէկին համար տէրութեն մէյակ կողմը տպարաններ կան, ու ուրիշներուն ան լեզուներով բան տպելը արգելած է. անոր համար շատ անգամ ան լեզուներով Ա իննա մէկը գիրք մը տըպելու ըլլայ նէ շատ անգամ մեզի կուգայ, ու կը տպենք. որովհետեւ կայսերական հրովարտակով արտունութի առած է միաբանութիւնը ամէն լեզուներով գրքեր տպելու:

3. Աս մօտիկները քարի տպարան մը գտան, որ խոշոր պատկերներ, ու խոշոր գրերով գրքեր ալ կրնան տպել: Սալթայի քարը, որ Ա իննա շատ կելայ, գեղեցիկ շտկելէն ետքը տարբեր տեսակ մեղանով մը տպելու բանը վրան կը գրեն կամ կը-

քաշեն, վերջը վերան ջուր մը կըլեցընեն, որ պարապ տեղերը կուտէ կըխորունկցընէ, վերջը կըմաքրեն, վրան մէլան կուտան, ու կըտպեն: Հիմայ ասանկ իրեք տպարան կայ:

4. Հատ տեսակ բաներու վրայ շատ կածէթ-թաներ՝ նոր եղած լուրերու (խապարներու) գրեր կամ օրագրութիւններ կըտպվին, որոնց երևելիները ասոնք են. Սիւնի-Յայլու-նի վեննայի կածէթ-թայ, կամ օրագրութի, որ մինակ բանի օրերը կըտպվի. իրեք մասն ունի, առաջինը տէրութե ու ուրիշ թագաւորութիւններու մէջ եղած կառավարութեան բաները, նշանաւոր նոր լուրերը, երևելի մարդիկներուն մահը, ու ասոնց նման բաները կըգրէ: Արկրորդ մասը կայսեր ու մեծ դատաստաններուն հրովարտակները, պարպըված եկեղեցական քաղաքական ու զինւորական պաշտօններ ու ասանկ բաները կըպատմէ: Արրորդը կորսըված՝ գտնըված բաները, ծառայութե, ծառայ, աղախին, հոգեզաւակ փնտռողները, ծախու բաները, աճուրդները, ու ասանկ հարկաւոր բաները կիմացընէ:

5. Ասի-Կոստանիլէի Պեօպախիլ-Կո՝ Աւստրիական դիտակ, որ ամէն օր կըտպվի ու վերինին առաջին ու երկրորդ մասին պատմածները կըպատմէ: Ասոր մէջը աւելի հաստատուն ու ստոյգ բաներ են, և ուրիշ օրագրութիւններու պէս ամէն տեսակ անըստոյգ ու սուտ լուրերը չիդներ:

6. Ասի-Կոստանիլէի, ճամբորդ՝ որ ամէն օր կելայ

ասիկայ գրողը ճամորդ մը կրճենայ, ու քաղաքները տեսած աղէկ բաները գովելով, ու գէշ բաները վար դարնելով կրպատմէ:

7. Ասոնցմէ 'ի զատ տասնըհինգ հատ ուրիշ կածէթթաներ ալ կրտպվին, որ ուսումնական ու հոգևոր նոր բաները կրպատմեն: Աորս հատ ալ ուրիշ լեզուաւ կրտպվին, քի բօյէմերէն մաճառերէն, հոռմեռէն, ու սերվիաներէն:

8. Անուններու գիրքը (Շէմալի'յէօ) իրեք տեսակ են, ու ամէն տարի նորէն կրտպվին: Առաջինը կայսեր ցեղին, երևելի պաշտօնատէրներուն, ու մեծ իշխաններուն ունեցած պատիժները, պաշտօնները, անունները, մականունները, պատուանունները, ու բնակութիւնն կըգրէ: Արկորդը զինւորական պաշտօնատէրներու վրայ կըգրէ: Ու երրորդը վաճառականներու, խանութ ունեցողներու, ու արհեստաւորներու վրայ կըգրէ: Այս ուրիշ ասանկ գիրք մ'ալ եկեղեցականներու, որ ան ալ իրեք տարին մէյմը կրտպվի:

ԳՒՍԻՍ Լ:

Բարե-ագրի ու ճամբորդի սուրհանդակները:

1. Քաղաքը մասնաւոր տեղ մը կայ, որ բարևագիր կամ զանազան նամակներ խրկել ուղօ-